ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 09-Ա03

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի 30.06.2026թ. նիստի

ք.Երևան 30.06.2026թ.

Նիստին մասնակցում էին դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը (նիստի նախագահ), դիտորդ խորհրդի անդամներ Վահրամ Ապրեսյանը, Խաչիկ Նազարյանը Գարիկ Մկրտչյանը, Խաչիկ Ղահրամանյանը, Վարազդատ Ասատրյանը, Անդրանիկ Ելինյանը /նիստի քարտուղար/ և կարգապահական հանձնաժողովի նախագահ Արման Սարգսյանը:

Արձանագրվեց, որ ներկա են խորհրդի 6 /վեց/ անդամները, քվորումն ապահովված է, և դիտորդ խորհուրդը իրավազոր է անցնել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը:

Օրակարգում ընդգրկված հարցեր՝

1. «Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿ կազմակերպության կարգապահական հանձնաժողովի կողմից «ՍԱԽԿԱԼՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Գարիկ Մկրտչյանի վերաբերյալ «ՍԱԽԿԱԼՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության տնօրեն Ջիվան Աբրահամյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված՝ կարգապահական վարույթը կարճելու մասին 26.05.2026թ.-ի եզրակացության քննարկում:

Քանի որ 1-ին հարցի քննարկումը վերաբերում էր Գարիկ Մկրտչյանին, վերջինս ներկա չգտնվեց 1-ին հարցի քննարկմանը:

Արման Սարգսյանը ներկայացրեց հարցի մանրամասները, հայտնեց, որ կարգապահական հանձնաժողովը որոշել է կարգապահական վարույթը կարճել:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին ներկաները և եկան այն եզրակացության, որ կառավարչի վարքագիծը կարող է համարվել խախտում, եթե դրանով խախտվել է օրենքի պահանջ, կամ այդ խախտումը որևէ մեկի համար առաջացրել է բացասական հետևանք՝ խախտելով նրա որևէ իրավունք: Խորհուրդը գտնում է, որ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին գույքագրմանը հրավիրելը որևէ իրավունքի խախտում չի առաջացրել:

Դիտորդ խորհուրդը գտնում է, որ կառավարչի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով /փոխկապակցվածություն/, ինչ վերաբերում է դատավորի ինքնաբացարկին, ապա սնանկության վարույթում առկա է որոշում:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «ՍԱԽԿԱԼՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Գարիկ Մկրտչյանի վերաբերյալ «ՍԱԽԿԱԼՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության տնօրեն Ջիվան Աբրահամյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված՝ կարգապահական վարույթը կարճելու մասին 26.05.2026թ.-ի եզրակացությանը հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 5, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / □ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	□ Կողմ / □ Դեմ	Քննարկմանը չի մասնակցում
Լևոն Պետրոսյան	□ Կողմ / □ Դեմ	Բացակա
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / □ Դեմ	

Որոշում 1. Հավանություն տալ «ՍԱԽԿԱԼՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Գարիկ Մկրտչյանի վերաբերյալ «ՍԱԽԿԱԼՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության տնօրեն Ջիվան Աբրահամյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված՝ կարգապահական վարույթը կարճելու մասին 26.05.2026թ.-ի եզրակացությանը:

2.«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿ կազմակերպության կարգապահական հանձնաժողովի կողմից Ա/Զ Նորայր Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի վերաբերյալ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲ ընկերության բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված՝ կարգապահական վարույթը կարճելու մասին 26.05.2026թ.-ի եզրակացության քննարկում:

Արման Սարգսյանը ներկայացրեց հարցի մանրամասները, այն է՝ Ա/Զ Նորայր Արտաշեսի Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի կողմից ներկայացվել է ծանուցում «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲ ընկերությանը նշված գործն ավարտելու վերաբերյալ, բանկի կողմից ներկայացվել է համապատասխան առարկություն, քանի որ բանկը համարել է, որ կառավարչի գործողություններն ամբողջությամբ և պատշաճ կատարված չեն, մասնավորապես համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել երաշխավորից գումար բռնագանձելու ուղղությամբ:

Կարգապահական հանձնաժողովը արձանագրել է, որ սնանկության գործընթացի անցկացման ժամանակ սնանկության գործով կառավարիչը գործել է օրենքով նախատեսված նորմերով, ինչպես նաև սահմանված պահանջներով /ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ/ և որոշել է կարգապահական վարույթը կարճել:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին նիստին ներկաները և հավանություն տվեցին կարգապահական հանձնաժողովի որոշմանը:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց Ա/Զ Նորայր Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի վերաբերյալ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲ ընկերության բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված՝ կարգապահական վարույթը կարճելու մասին 26.05.2026թ.-ի եզրակացությանը հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☐ Կողմ / ☐ Դեմ	Բացակա
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 2. Հավանություն տալ «Ա/Զ Նորայր Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի վերաբերյալ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲ ընկերության բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված՝ կարգապահական վարույթը կարճելու մասին 26.05.2026թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելու մասին) :

3.«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿ կազմակերպության կարգապահական հանձնաժողովի կողմից «ՄՈՎՍԻՍՅԱՆ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արամայիս Իսպիրյանի վերաբերյալ «ՄՈՎՍՈՒՍՅԱՆ» ՍՊ ընկերության տնօրեն Է. Մովսիսյանի, պարտատերեր Էդուարդ Մովսիսյանի և Քրիստինա Արևշատյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված 26.05.2026թ.-ի եզրակացության քննարկում:

Արման Սարգսյանը ներկայացրեց հարցի մանրամասները, այն է՝ դիմումատուները գտնում են, որ սնանկության գործով կառավարիչ Ա.Իսպիրյանը իրեն կատարած գործողություններով դրսևորել է ակնհայտ կողմնակալություն, դրանով փորձելով ամեն կերպ վնաս պատճառել պարտապան ընկերությանը և բոլոր հնարավոր միջոցներով ցանկանում է պարտապանին տանել լուծարման, այն դեպքում, երբ պարտապան ընկերությունն իրականացնում է ֆինանսական առողջացման ծրագիր:

Արման Սարգսյանը հայտնեց, որ «ՄՈՎՍՈՒՍՅԱՆ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչը վերացրել է բողոքում նշված թերությունները, դիմումատուների հետ եկել են ընդհանուր համաձայնության, այդ իսկ պատճառով կարգապահական հանձնաժողովը որոշել է կարգապահական վարույթը կարճել:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին նիստին ներկաները և հավանություն տվեցին կարգապահական հանձնաժողովի որոշմանը:

<u>Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց</u> «ՄՈՎՍՒՍՅԱՆ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արամայիս Իսպիրյանի վերաբերյալ «ՄՈՎՍՈՒՍՅԱՆ» ՍՊ ընկերության տնօրեն Է.Մովսիսյանի, պարտատերեր Էդուարդ Մովսիսյանի և Քրիստինա Արևշատյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված՝ կարգապահական վարույթը կարճելու մասին 26.05.2026թ.-ի եզրակացությանը հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☐ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☐ Կողմ / ☐ Դեմ	Բացակա
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

<u>Որոշում 3.</u> Հավանություն տալ «ՄՈՎՍԻՍՅԱՆ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արամայիս Իսպիրյանի վերաբերյալ «ՄՈՎՍՈՒՍՅԱՆ» ՍՊ ընկերության տնօրեն Է. Մովսիսյանի, պարտատերեր Էդուարդ Մովսիսյանի և Քրիստինա Արևշատյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված՝ կարգապահական վարույթը կարճելու մասին 26.05.2026թ.-ի եզրակացությանը:

4.«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿ կազմակերպության կարգապահական հանձնաժողովի կողմից սնանկության գործով կառավարիչ Խաչատուր Պապոյանի վերաբերյալ «ՍԳԿԿ» ԻԿ գործադիր տնօրեն Անդրանիկ Ելինյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 19.06.2026թ.-ին ներկայացված 26.05.2026թ.-ի եզրակացության քննարկում:

Արման Սարգսյանը ներկայացրեց հարցի մանրամասները, այն է՝ «ՍԳԿԿ» ԻԿ գործադիր տնօրեն Ա.Ելինյանը դիմում է ներկայացրել կարգապահական հանձնաժողովին հայտնելով, որ ՍԳԿԿ» ԻԿ անդամ Խաչատուր Պապոյանը սիստեմատիկաբար չի վճարում անդամավճարը և խնդրել, որ լսել Խ.Պապոյանի հարցը: Կարգապահական հանձնաժողովը ուսումնասիրելէ հարցը և որոշել է Խաչատուր Պապոյանի նկատմամբ կիրառել տույժ՝ նկատողություն:

Հանձնարարել գործադիր տնօրեն Անդրանիկ Ելինյանին պարտքը վճարելու վերաբերյալ նոր ծանուցում ուղարկել Խաչատուր Պապոյանին: Պարտքը չվճարելու դեպքում նյութեր պատրաստել և ուղարկել դատարան վճարման կարգադրություն ստանալու համար:

5.«ՍԳԿԿ» ԻԿ դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը հիշեցրեց, որ 22.01.2026թ. «ՍԳԿԿ» ԻԿ դիտորդ խորհրդի և մի շարք անդամների հետ քննարկվել է, որ որևէ

կազմակերպության հետ կնքել պայմանագիր Facebook և Instagram սոցիալական հարթակների ստեղծման համար և տեղեկացրեց, որ պայմանագիր է կնքվել «Իրավաբանական հայկական ասոցիացիա» ՀԿ-ի հետ՝ սոցիալական մեդիա մարկետինգի և մեդիա հետևյալ ծառայությունները մատուցելու համար՝

Facebook և Instagram սոցիալական հարթակների կառավարում, էջերի սպասարկում և զարգացում, հարթակներում մեկնաբանությունների և հաղորդագրությունների կառավարում, բովանդակության ստեղծում և տեղադրում, մասնավորապես՝ Facebook և Instagram հարթակներից յուրաքանչյուրում ամսական մինչև 8 հրապարակում, որոնք կարող են ներառել տեքստ, նկար, տեսանյութ, ինֆոգրաֆիկա, քվիզ և stories:

Նշված ծառայությունների համար կազմակերպությունը պետք է 01.06.26-31.12.26թթ վճարի ամսական 300.000 ՀՀ դրամ:

Հունիս և հուլիս ամիսների տեսանյութերը առկա են, էջերը թարմացվում են:

Հանձնարարել Ա. Ելինյանին իրազեկել բոլոր կառավարիչներին, որպեսզի ցանկացողները պատրաստեն սնանկության ոլորտին առնչվող կոնկրետ թեմայով որևէ ելույթ, որի շրջանակներում հանրությունը կիրազեկվի սնանկության գործունեության տվյալ հատվածի մասին: Առավել ընդունելի առաջարկները պայմանագրի շրջանակներում կնկարահանվի և կլուսաբանվի iravaban.net կայքում, Facebook և Instagram սոցիալական հարթակներում:

6.Ելույթ ունեցավ Գարիկ Մկրտչյանը և առաջարկեց սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանի գրասենյակի հրդեհվելու հանգամանքը հաշվի առնելով տրամադրել տրամադրել ֆինանսական միանվագ օգնություն 300.000 ՀՀ դրամ:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին նիստին ներկաները նահավանություն տվեցին:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց Արման Սարգսյանին 300.000 ՀՀ դրամ ֆինանսական միանվագ օգնություն տրամադրելու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / □ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / □ Դեմ	
Լևոն Պետրոսյան	□ Կողմ / □ Դեմ	Բացակա
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / □ Դեմ	

Որոշում 6. Հաշվի առնելով գրասենյակի հրդեհվելու հանգամանքը Արման Սարգսյանին տրամադրել ֆինանսական միանվագ օգնություն 300.000 ՀՀ դրամի չափով:

Հանձնարարել գործադիր տնօրեն Անդրանիկ Ելինյանին կազմակերպել նշված գումարի վճարումը:

Նիստի նախագահ՝ Տիգրան Սահակյան

Նիստի քարտուղար՝ Անդրանիկ Ելինյան